

ցնծութիւն», որի մէջ հեղինակը ներբողում է զբքերը որպէս հարսի (եկեղեցի) զարդարանքի մասեր, թուելով նրանց անուներն ու գործածութեան տեղը:

Խընդա խորանդ լուսոյ, խորհրդարանդ Աստուծոյ  
Ընկալ զընծայս խորհրդո՞ զգիրս աւրինաց հաւատոյ:

Այս քեզ շարոց մարզարտոյ եւ զումարտակ քում  
զըլխոյ .  
Նոյն մեհեւանդ քում անթոյ եւ բաղկալար դաս-  
տակոյ .

Սա մատանի քում կընքոյ եւ զինդ զեղոյ ականջոյ,  
Սա տարի գաւտոյ քոյդ միջոյ եւ շաղբ հերաց քում  
հիւսոյ .

Ոսկի խնձոր խաղալոյ եւ վարդ ծոցոյդ յարակայ :  
Իսկ այս կտակ նոր ուխտի, ներկեալ արեամբ  
Յիսուսի,  
Սա դամոսնկի քում զլիսի եւ Սարասիսի ճա-  
կատի .

Ձառքաշ խիլայ վերն յարկի բեհեզ հաշազ  
պարփակի .  
Հանդերձ նոսիճ հալուզի եւ պարեզաւտ շուշ-  
թարի :  
Սա զարդ անձինդ զովելի բիւրապատիկ խի-  
լայի .  
Որ աւրըստաւուր փոփոխի ըստ խորհրդ-  
դեան քում տանի,  
Երկըրպագեալ խիլայտըւին, որ զայ առ քեզ  
հեզաբար (\*):

Միւս գանձը «Մին միածին հաւր որդի» նուիրուած է նորակերտ պատկերների օրհնութեան, որի մէջ տեղեկութիւն կայ որմանկարչութեան եւ պատկերագրութեան մասին: Առաջին հերթին Յիսուսի եւ Աստուածածնի պատկերները, որոնց նախատիպը առաքեալների ձեռքով բերուած է Հայաստան, ապա Մանուէլի պատկերը, երկու կողմից Միքայէլ եւ Գարբիէլ հրեշտակագետներով, ի վերջոյ բոլոր սուրբերն ու արդարները

Նըկարագրեալք ի դեղոց յեկեղեցիս արդարոց  
Այլ եւ ի տիպ տախտակաց կենդանագրեալ նա-  
զաշաց :

Մխիթարի կեանքն ու գործունէութիւնը ամփոփելու համար մեզ կը մնայ յիշել եւ նորա առանձնու-

թեան քարայրի շինութիւնն ու ժայռի վերայ փորած արձանագրութիւնը (պատկ. 164). այդտեղ նա յայտնում է, որ շինել է այդ անապատը իբրև տեղի անդրադառնալի և ընթերցման. խնդրում է յիշել «զիշխանն մեր Պռաւշ եւ զաւրհնել զաւակս նորա»: Թուական նշանակում է ՁԼԸ, որ ըստ Մխիթարի հաշուի հաւասար է Քրիստոսի 1291 թուին, տառերի գիւտի ՊԿԹ տարուան, սկիզբը հաշուելով 423 թուականից, հայոց եկեղեցու հաստատութեան կամ լուսաւորչի ՁՁԵ, սկիզբը հաշուելով 307 թուրը, և Ադամի 6439 թուին, ստեղծագործութիւնն ընդունելով 5198 տարի առաջ



Պատկեր 165.

Քրիստոսից, Սարկաւազաղիը կամ Փոքր թուականի ՄՁ (= 206) թուին, իւր կեանքի 67<sup>րդ</sup> տարին: Այս թուականագրութիւնը համեմատ է իւր ժամանակագրութեան (\*): Քարայրը գտնուում է վանքի պարսպից դուրս, գէպի արեւմուտք լերան գոգում, գեղեցիկ տեսարանով դէպի Ազատ գետը եւ դիմացի լեռնալանջերը:

Մխիթարի կրտսեր ժամանակակիցն էր Սարգիս կուսակրօն քահանան «ի մեծահոգակ սբ. ուխտէն Այրիվանաց», որ ստացել է մի աղօթմամտոյց (Սաղմոսարան) Հաւուց Թառի Գրիգորի գրչութեամբ. «Ի թվ. ՁԽԷ (= 1298), յիշատակ իւրն եւ աշակերտաց իւրոց

(\*) Մեր Մխիթար Այրիվանեցի. 7-8:

(\*) Մոսկուայի հրատ. եր. 47, 16, 42, 60: